ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՎԵՐԱԾՆՎԱԾ ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔԻ ՓԱՌԱՊԱՆԾ ՏՈՆԸ

Նոյեմբերի 29-ին լրացավ Հայաստանում սովետական կարգերի հաստատման 43-ամյակը:

Հայ ժողովուրդը, ամեն տարի, ազգային հպարտության և խանդավառության բերկրալի զգացմունքներով է տոնում իր հայրենիքի, իր ազատության և անկախության փառապանծ տոնը:

Պատմական այս մեծ տարեդարձի առթիվ, երջանիկ և հպարտ է մեր ժողովուրդը այն խորին գիտակցությամբ, որ երկար դարերի ստրկությունից հետո, համառ ու հերոսական պայքարով նվաճել է իր ազատությունը և արդարորեն հպարտանում է իր հայրենիքով, նրա նվաճումներով և իր պայծառ, լուսե գալիքով:

Անցյալի ահավոր ու սև բռնությունները, հայ հողի և մեր հոգիների վրայով անցած մորիկները չեն կարողացել մարել ազգայի մասին մեր **հույսն** ու **հավատը**, խեղդել անկախության և ազատ ապրելու մեր սրբազան ձգտումը, ընկճել՝ մեր ազատատենչ ու լուսաբաղձ հոգին:

Նոյեմբերի 29-ը հայ ժողովրդի ժամանակակից, նորագույն շրջանի պատմության շրջադարձային հանգրվաններից մեկն է, երբ մահվան դատապարտված հայությունը, անօգնական, լքված, վիրավոր սրտով և արյունաքամ, բայց ապրելու և մանավանդ հաղթանակելու անկոտրում հավատով ու համբուրելի վճռականությամբ լցված, ոտքի կանգնեց և ռուս մեծ ու ազնիվ ժողովրդի եղբայրական օգնությամբ, իր պատմական հայրենիքի մի մասի վրա, նվաճեց ազատ և խաղաղ ապրելու, նորից ստեղծագործելու իրավունքը:

Նոյեմբերի 29-ը հաղթանակի օր է հայ ժողովրդի համար, նրա մղած կյանքի և մահվան ահեղ պայքարում:

Նոյեմբերի 29-ը հայ ժողովրդի պատմության մեջ ոսկի տառերով է արձանագրված, որպես մեր ազատագրական պայքարի փառավոր և հերոսական էջերից մեկը:

Նոյեմբերի 29-ի հաղթանակով սկիզբ դրվեց մեր պատմության մեջ նմանը չտեսնված ազգային, քաղաքական, տնտեսական և մշակութային մի փառավոր շրջանի: Հայաստանում սովետական կարգերի հաստատումը հիմնովին կերպարանափոխեց մեր երկրի և ժողովրդի կյանքը:

Նոյեմբերի 29-ը լայն հորիզոններ բացեց մեր ստեղծագործ, աշխատասեր և տաղանդավոր ժողովրդի ազգային և հոգևոր վերածննդի համար: Վերջ տրվեց մեր թափառումներին, լացին ու արցունքին, վշտին ու վերքին:

Նոյեմբերի 29-ը է՛լ ավելի համախմբեց բովանդակ հայությունը իր հայրենիքի շուրջ: Նա միաժամանակ կոփեց հայ ժողովրդի ազգային-հասարակական միասնությունը:

43 տարին ոչ մի ժողովրդի կյանքում մեծ ժամանակաշրջան չէ: Բայց պատմական են մեր հայրենիքի և ժողովրդի նվաճումները այդ կարճ ժամանակաշրջանում:

Հայաստանում սովետական կարգերի հաստատման օրից, բառացիորեն հրաշքի հավասար վիթխարի փոփոխություններ են կատարվել մշակույթի, արվեստի, գիտության, գրականության, ժողովրդական կրթության, լուսավորության, գյուղատնտեսության և հայ ժողովրդի հոգևոր, բարոյական և ազգային նոր կյանքի կերտման մեջ:

Վերջերս Սովետական Հայաստան այցելած ֆրանսիացի հայտնի գրող Ժան Պոլ Սարտրը Հայաստանից և հայ ժողովրդից ստացած իր տպավորությունները արտահայտում է հետևյալ

մտածումներով. «Ես մեծ հաճույք ստացա Հայաստան այցելելով: Ինձ հաջողվեց ծանոթանալ հայոց ինքնատիպ մշակույթին, որն արտահայտվում է ինչպես ժողովրդի ամենօրյա կյանքում, այնպես էլ նրա հինավուրց, սակայն միշտ երիտասարդ հանրապետության մեջ: Ես տեսա հայ ժողովրդի ողբերգական պատմության հետքերը, ժողովրդի, որը դարերով ենթակա է եղել օտարների ասպատակության: Ես չեմ սխալվի, եթե ասեմ, որ ձեր ժողովուրդն ունեցել է ոչ միայն անկորնչելի արիություն ներխուժողների դեմ մղված պայքարում, այլև ամեն անգամ, վերանորոգելով մշակույթի քանդված օջախները, նա կարգացրել է իր ազգային ավանդությունները: Այցելելով Հայաստան, ես ապշած մնացի հանրապետության վերածնության և առաջադիմության լայն ծավալով: Էլեկտրակայաններ, արդյունաբերական խոշոր գործարաններ, ջրային ոռոգման հիանալի ցանց, նոր յուրացվող հողեր. այս ամենը հայ ժողովրդի հեղափոխական ուժի արտահայտություններ են: Ինձ վրա խոր տպավորություն թողեց Հայաստանի մայրաքաղաք Երևանը, որը հանդիսանում է ժողովրդի ուժի և արիության իսկական արտահայտությունը: Ես իմ կյանքում չեմ տեսել մի քաղաք, որի բնակչությունը պատմականորեն կարճ ժամանակամիջոցում՝ 40 տարվա ընթացքում, 30 000-ից հասներ 600 000-ի»:

Մեր հայրենիքը այսօր ծածկվել է գիտության, կրթության, մշակութային, ուսումնական հաստատությունների լայն ցանցով:

Այժմ Հայաստանում գործում են ավելի քան 90 գիտահետազոտական ինստիտուտներ, 5 000 գիտական աշխատողներ իրենց մտքի և սրտի նպաստն են բերում մեր Հայրենիքի բարգավաճման և հզորության:

Այսօր Հայաստանի ուսումնական հաստատություններում սովորում են 457 000 հոգի, 41 000-ով ավելի քան անցյալ տարի:

1963 թվականի ընթացքում հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններից շրջանավարտ եղան 3 200 մասնագետներ, իսկ միջնակարգ մասնագիտական հաստատություններից՝ շուրջ 3 500 հոգի, որոնք լծվեցին մեր մշակույթի, գիտության, ժողովրդական տնտեսության հետագա զարգացման աշխատանքներին:

Մեր երկրում ազգաբնակչության առողջության նկատմամբ ցույց տրված հոգատարության և ուշադրության շնորհիվ, կայուն հիմքերի վրա է դրված մեր ժողովրդի առողջության պահպանման գործը: Բավական է նշել, որ եթե 1913 թվականին Երևանն ուներ ընդամենը **3 հիվանդանոց 51 մահճակալով և 31 բժիշկ** ու նույնքան միջին բուժաշխատող, ապա այսօր միայն Երևանում գործում են 100-ից ավելի բուժական հիմնարկներ, մոտ 5 000 մահճակալով: Այս բուժհիմնարկներում աշխատում են **3 000 բժիշկներ և 5 000 միջին բուժաշխատողներ:**

Երբեմնի հետամնաց, քայքայված Հայաստանը դարձել է սովետական բժշկագիտության կարևոր կենտրոններից մեկը:

Այսօր մեր հանրապետության մեջ բժշկագիտական հետազոտություններով զբաղվում են 600 գիտաշխատողներ, այդ թվում 42 դոկտոր-պրոֆեսորներ և 254 բժշկական գիտությունների թեկնածուներ:

Մեր երկիրը, իր հազարամյակների պատմության ընթացքում, չի տեսել երբեք բնակչության այնպիսի աճ, ինչպիսին այժմ ունի: Եթե անցյալում, երկրում տիրող անբարենպաստ պայմանների բերումով, ամեն տարի հազարավորներ գաղթում էին հայրենիքից, ապա վերջին տարիներում հայրենիք են վերադարձել ավելի քան 100 000 ներգաղթողներ:

Մեծ թափ է ստացել նաև բնակարանային շինարարությունը: Մինչև 1965 թվականը Հայաստանում կառուցվելու է նույնքան բնակարան, ինչքան կառուցվել է նախընթաց տասնամյակում: Ամբողջ հանրապետությունը իրենից ներկայացնում է շինարարական հսկա մի հրապարակ: Կառուցում է հայ ժողովուրդը, կառուցում է դարերի և հավերժության համար:

Առանձնապես մեծ են նաև ժողովրդական տնտեսության հիմքը հանդիսացող էներգետիկայի զարգացման հաջողությունները: Էներգիայի արտադրությունը, 1913 թվականի համեմատությամբ, մեծացել է 477 անգամ: Հայաստանը էլեկտրաէներգիայի արտադրությամբ առաջ է անցել նույնիսկ տեխնիկապես զարգացած մի շարք եվրոպական երկրներից:

Հայաստանում վերջին տարիներին ստեղծվել է նաև քիմիական հզոր արդյունաբերություն: Քիմիան դարձել է մեր երկրի արդյունաբերության առաջատար ճյուղը:

Հայաստանի արդյունաբերությունն այժմ օրական թողարկում է ավելի արտադրանք, քան թողարկվել է 1913 թվականի ընթացքում: Հայաստանն իր արտադրանքներն արտահանում է ոչ միայն Սովետական Միության եղբայրական բոլոր հանրապետություններ, այլև արտասահմանյան ավելի քան 70 երկրներ:

Արմատապես փոխվել է նաև երբեմնի հետամնաց ու թշվառ հայ գյուղի պատկերը:

Սովետական իշխանության տարիներին ոռոգվող հողերի տարածությունը ավելի քան կրկնապատկվել է: Նոր յուրացված հողային տարածությունները վերածվել են այգեստանների, մրգաստանների: Միայն վերջին 4 տարում բանջարեղենի արտադրությունն ավելացել է 62 տոկոսով, շաքարի ճակնդեղինը՝ 54:

Բյուր երակներ են ծաղկում այսօր վերածնված հայ ժողովրդի հոգում: Անցնող յուրաքանչյուր օր երջանկության, բարգավաճման նոր

գարուններ է բերում մեր երկրին և մեր ժողովրդին:

Մայր երկրի հայությունը իր ապգային վերածնության, պետականության, իր պայծառ ապագայի հիմքերն է ամրապնդում օրերի հետ և շենացնում համայն հայության հայրենի տունը:

Սովետական Հայաստանում 43 տարիների ընթացքում ինչ ստեղծել է հայ ժողովուրդը՝ իրե՛ն է պատկանում:

Ժողովրդական մեծանուն նկարիչ Մարտիրոս Սարյանը, Մայր Հայրենիքի բովանդակ ժողովրդի անունից, սրտաբուխ, ջերմ խոսք ուղղելով ափյուռքահայ նոր սերնդին, ասում է. «Երամից ետ մնացող կռունկներ, ես ձե՛զ եմ դիմում, ձե՛զ հետ եմ ուզում խոսել այսօր... Հայրենիքից դուրս ձեզ ամեն ինչ կխոստանան, բայց նրանք կխլեն ձեզնից ամենակարևորը՝ ապգի հպարտությունը, հայրենիքը: Ուրիշ բան է հայրենիքը. առանց հայրենիքի, առանց հայրենիքի կարոտի դուք կկորչեք, կվերջանաք, դուք կկորցնեք այն հողը, ուր արմատներ պետք է ձգեիք, որտեղից սնունդ պետք է ստանայիք... պահեք, պահպանեցեք հայրենիքն ու հայրենին, միք դառնա երամից ետ մնացող կռունկներ. ետ մնացածները մեռնում են մենակության մեջ, սառած գետերի ափին»:

Այսօր պայծառ է մեր վերածնված հայրենիքի ներկան, է՛լ ավելի հուսալից, խոստումնալից է մեր ապագան, լուսե գալիքը:

Սովետական Հայաստանն է հայ ժողովրդի դարավոր ապատագրական պայքարների, նահատակության, պայծառ հույսերի վերջնական ու փրկարար հանգրվանը, խաղաղ ու ապահով միակ նավահանգիստը, դարերով մեր երապած, փնտռած և ի վերջո գտած Ավետյաց երկիրը:

Փա՜ռք վերածնված հայ ժողովրդին:

Փա՜ռք մեր հողին, ջրին, լույսի և հույսի հայրենիք, նոր ու հզոր Սովետական Հայաստանին: